Մինչ՝ հանդիսատես՝ կը ծափեն մարդիկ ու կը ծիծաղին.
Հին օրերու պէս կը բախեն բաժակ, ու կ'ըմպեն գինին։

Հանրատուներու դռներուն առջեւ ահա՛ քովէ քով
կը շաղակրատեն անսի՛րտ զիակները, կը շաղակրատեն.
կը մօտենան լինձ, կուրծքիս կը փարին և նշդրակներով
Սի՛րտս կը ճեղքեն, ԸՋԳԱՅՈՒՄԻՍ դէմ, սի՛րտս կը ճեղքեն.

Մինչ՝ հանդիսատես՝ կը ծափեն մարդիկ ու կը ծիծաղին.
Հին օրերու պէս կը բախեն բաժակ ու կ'ըմպեն գինին։

Ցե՛ս, խաւարին մէջ կը հեռուին լինձ, կը հալածեն գիս
Առանց գլուխի շարժող մարմիններ, առանց գլուխի,
Գա՛նկըս կը փընտռեն և ՄՏԱԾՈՒՄԻՍ հըրացան կ'ուղղեն՝
Որպէսզի մեռնի՛ ըստեղծողն իմ մէջ, որպէսզի մեռնի։

Մինչ՝ հանդիսատես՝ կը ծափեն մարդիկ ու կը ծիծաղին,
Հին օրերու պէս կը բախեն բաժակ, ու կ'ըմպեն գինին։

4 Մայիս 1934

ՀՐԱԶ ՓԱՇԱՐԵՆՑ

ՏՕՆԱԿԱՆ ԱՅԳ

Զանգակներն քո՞նչ ունին որ մօտն ու հեռուն
կը զօղանջեն, կը տզզան.

Երգ մ'է անհուն՝ մերթ ոսկի, մերթ արծաթի,
Ըստուերին մէջ աւօտեան։

Ցամբը ճօճքով մը կը հայցես, ոսկի ձայն,
Երկընքին մէջ քնէած։

Հնչուն երգին մէջ կը գանչէ քու զօղանջդ
Արծաթի ձայն – կը պաշտեմ,

կը պաշտեմ – Օն ըսէ, ոսկի նօթ – Ալիքն
Երկնքէն կախ է, հանդարտ.

Բայց ձայն մը խոր՝ սիրոյն ներքեւ կ'որոտայ
Կարծես ըղձին պատասխան.

Գերեզմանի ձայնն է այն։

Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ

Ց. ՓԱՍՓՈՒԼԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՓԵՍԱՑԻ (ԵՊՍ.)

ԵԿԵՂԵՑԻԿՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմավէպ, 1934, էջ 52)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ը.

Վասն սակաւատեւ իշխանութեանն, որ ընդ այն ժամանակս եղեւ, ասէ երիս յերկրին Ասորւոց. և առաքակ արքային Պարսից յերկիրն Հռոմոց, ի Հայաստան եւ ի Կապադովկիա։

*Յետ այսր ամենայնի խաղաղութիւն հաշտութեան լինէր յերկրին Ասորւոց զամս երիս, վճարելով երիս տաղանդս վասն երից ամաց, բայց ի Հայաստան պատերազմ դեռ յերկոցունց կողմանց եւս ունէր մղել։ Եւ քանզի զառաջին մասն իրացս վերագոյն ուրեմն յեկեղեցական պատմութեանս սակաւուք պատմեցի, թէ ո՛րպէս Պարսկահայք կամեցան մոռանել ընդ իշխանութեամբ Հռոմոց, այժմ միայ լինձ զայն ասել որ լինչ յետ այնր ժամանակի պատահեաց։ Թագաւորն Պարսից իրրեւ էառ զԴարան՝ հրապարատցեալ յանձն իւր խրոխտացեալ կուրութեամբ. եւ համարեալ կարծէր եթէ չիք այնուհետեւ երկիւղ պատերազմի յերկրին Ասորւոց, մեծաւ յուսով դիմեաց ի Հայաստան, հաստատելով զերեսս իւր ի սահմանագլուխ անդր իւրոյ բաժնին Հայոց, ի Թէոդոսուպոլիս, ի Կեսարիա, ի Կապադովկիա և յայլ քաղաքս կողմանցն։ Մինչդեռ նա յայս միտս քաջալերէր, առաքեցաւ առ նա լռակացն Թէոդորոս հրեշտակութեամբ, եւ եռես զնա վառեալ կազմութեամբ ի պատերազմ։ Կալաւ զնա թագաւորն առ իւր. և մինչ խնդրէր լռակացն արձակել զինքն՝ նա ծաղրելով իմն ասէր ցնա, եկ ի միասին երթիցուք ի Թէոդոսուպոլիս Հայոց, պարտ է քեզ ընդ իս երթալ անդր, զի լուանաս ի ջերմուկսն և հանգչիս և ապա արձակեմ զքեզ երթալ։ Եւ այսպէս առեալ զնա ընդ իւր բերէր ի Հայաստան, վստահ լինելով երթալ անդր և անաշխատ առնուլ զքաղաքն։ Զայն լուեալ զօրացն Հռոմոց, թէ եւ երկնչէին յանուանէ թագաւորին, սակայն կազմեալ պատրաստէին ըստ օրինի մարտի ընդդէմ նորա։ Իրրեւ տեսանէր զմեծ բազմութիւն զօրացն, լքանէր յանձն իւր, զի ասեն, աւելի քան զ120,000 լինել զօրացն[1], որ միայն գալստեան նորա, և կազմէին ի պատերազմ ընդդէմ նորա. զահի հարկանէր պարսիկն, խոյս տայր, երթայր յայլ քաղաք։ Եւ սոքա զհետ նոցա պնդէին հասանէին առ նոսա և վարէին անտի եւս։ Եւ իրրեւ երթային մերձ հասանէին ի զօրս թագաւորին՝ առաւել եւս ճանաչէին զգօրութիւն իւրեանց թէ մեծ է յոյժ, և արհամարհէին զնովաւ։ Տեսեալ զայս ամենայն թագաւորին և գիտացեալ թէ ո՛չ եւս կամաց իւրոց յաջողէ, դարձաւ ընդ կողմանս լերանցն հիւսիսոյ, դէպ ի Կապադովկիա, կամելով երթալ առնուլ զկեսարիա։ Զայն տեսեալ Հռոմոց, ընդէմ դարձան նմա, և յառաջագոյն քան զնա եկին ի Կապադովկիա։ Կալան զառաջ նորա և սպասէին նմա ի մէջ լերանցն[2] Կապադովկիոյ, ուր և ար-

1. Չիք յԱբաթիչէն թիւ զօրացն։
2. Ըստ Բար–Հեբր. ի լերին Բագրատայ. որպէս թարգմանէ Բրունս։

digitised by A.R.A.R.@

գելին զնա և ոչ տային թոյլ յառաջ անցանել. և բանակէին անդէն դէմ ընդդէմ միմեանց ոչ սակաւ աւուրս, և ոչ իշխէր պարսիկն մարտ եղեալ կռուել ընդ նոսա: Իբրեւ ետես, թէ Հոռոմք բազմաթիւք և զօրաւորք են քան զինքն և ոչ կարէ յաղթել նոցա և երթալ ի կեսարիա, լուծաւ լքաւ, խնդրէր այնուհետեւ եթէ հնար իցէ պատրել զնոսա խաբէութեամբ և դառնալ յերկիր իւր: Իսկ Մոգուցն արտունջ բարձեալ հակառակէին ընդ նմա: Յայնժամ դառնայր նա ընդ կրունկն, գնայր ի Կապադովկիա՝ առնուլ զԵբաստիա, մինչդեռ (երկիրն ամենայն) զարհուրէր յերեսաց զօրացն Հոռոմոց: Ապա առ ամօթոյ, զի ոչ կարաց վճարել զոր եղեալ էր ի մտի, անկաւ ի վերայ Սեբաստիոյ և ետ զնա ճարակ հրոյ. բայց աւար և գերի ոչ եգիտ անդ, քանզի յերկիւղէ նորին փախուցեալ էին ամենայն բնակիչք երկրին: Եւ իբրեւ եղեալ անտի յառաջ խաղայր՝ անդէն յայտ առնէր զթիկնադարձն լինել իւր և դարձեալ ընդ արեւելս փութայր ըստ մարթելոյ ճողոպրել զանձն ողջանդամ յաշխարհ իւր: Յայնժամ Հոռոմք զհետ մտեալ հասանէին եւ խրոխտային ածեալ զբռամբ զզօրս նորա: Իբրեւ ետես, եթէ ի նեղ անկաւ և փակեցաւ ի զօրացն Հոռոմոց յամենայն կողմանց, ապա առ հարկի ճեպով մեծաւ խոյս ետ մերկ ի լերինս, թողեալ թշնամեաց զբովանդակ բանակ իւր և զվրանն, զամենայն կազմութիւն, զգանձ իւր, զարծաթ, զոսկի և զականս պատուականս և զընտիր ընտիր թագաւորական զարդուցն և զգեստուց: Անդէն անկանէին Հոռոմք ի վերայ համօրէն լքելոյ բանակին, ի բուռն առնուին եւ սպանանէին զամենեսեան զորս կենդանի գտանէին: Առնուին զամենայն կահ ըստ պատու թագաւորին և զմեծամեծաց նորա եւս և զվրանն ընդ որով պաշտէին նոքա զկրակն, զգրաստս բեռնաբարձս և զձիս յորոց վերայ նստէր թագաւորն: և լցան աւարօք. մինչեւ ոմանք ի Հոռոմոց առեալ և զկայսերավայել կարասին, յանդրգնօրէն համարձակութեամբ և լի փառաթամուքեամբ փախչէին, և ոչ ուրեք զբռանէին: Իսկ փախուցեալքն ի բանակէն Պարսից և ապրեալքն չոքան ողջ ի բերան առ թագաւորն եւ ասեն. Տէր, Հոռոմք յանկարծակի անկան ի վերայ մեր, զբազումս ի ծառայից քոց ընդ սուր հանին, և զբովանդակ բանակն առեալ կողոպտեցին: Զայս լուեալ թագաւորին ասէր. Որ ինչ եղեւն եղեւ: Եւ պատուէր հրամանի տայր ամենայն զօրաց իւրոց գալ շուրջ առնուլ զիւրեւ և կազմել նմա վահանօք իւրեանց պատուար. կացուցանէր զնոսա կարգ ըստ կարգէ և հեծեալ ի ձի՝ մտանէր ի կարգս նոցին յորդորէր զնոսա ցուցեալ զալիս իւր սպիտակացեալ և ասէր. Եղբարք իմ և որդեակք, խնայեցէք յիս տեսեալ զալիսս զայս սպիտակ. երթայք մարտ դիք ի վերայ թագաւորութեանս Պարսից, զի մի մատնեսցի ի ծաղր և ի ծանակ: Ահա և ես որպէս զմի ոք ի ձէնջ ի մարտ մտանեմ ընդ ձեզ: Իսկ աւագանի նորա հանապազ վհատէին ընդ նմա եւ ասէին. Ընարցեսցաւ մեօք անուն Պարսից, զի ոչ ուրուք ի թագաւորաց Պարսից արարեալ էր ցարդ այսպիսի ինչ զոր դու արարեր, զի ածեր զմեզ ի մէջ լերանցս կորուսանել միահաղոյն: Եւ զոր նորա խօսէին ի միջի իւրեանց՝ լուան Հոռոմք: Վերստին փորձել կամեցեալ Պարսից զարձան յայլ կողմն զի վերծցին ի քաղաք ուրեք. եկին թափեցան ի վերայ Մելիտինեայ քաղաքի, և եթէ ոչ ծագէր անմիջապանութիւն և նախանձ ի զօրավարս Հոռոմոց, կամ գէթ միաբանեալ էր նոցա ընդ միմեանս, անդէն ի տեղւոջն զնա հանդերձ ամենայն զօրօքն սպառսպուռ սատակեալ էր: Բայց Հոռոմք բան եդեալ բաժանեցան ի միմեանց և երթեալ պաշարեցին զթագաւորն հայելով ի պարիսպն Ցուստինիանոս յորդի Գերմանոսի: Իսկ նորա երկուցեալ փախեաւ առաջի թագաւորին, եւս և ընկերակիցք նորա ոչ ժամանեալ նմա չեղեն ձեռնտու: Զայս տեսեալ թագաւորին և զօրաց նորա զբնացեալ ի Մելիտինէ ճարակ հրոյ եւտուն զքաղաքն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Թ.

Հրկիզումն Մելիտինեայ, և որ ինչ յետ այնորիկ:

Հասեալ Պարսկին ի Մելիտինէ՝ անդէն ետ հրոյ ճարակ զբովանդակ քաղաքն: Եւ մինչդեռ մեկնեալ ի քաղաքէն՝ կամէր անցանել ընդ Եփրատ՝ դառնալ յաշխարհ իւր, զօրավարք Հոռոմոց առաքեցին ասել ցնա. Գործդ զոր գործեցեր գալ և հրով դատել զքաղաքն, ոչ է գործ թագաւորի, ասպատակել զնասու ազգաւ: Նա և մեզ իսկ որ ծառայք եմք թագաւորի՝ ոչ էր արժան առնել այդպէս որպէս դու արարեր, դու՝ որ կոչես զքեզ ոչ միայն լոկ թագաւոր, այլ և թագաւորաց թագաւոր: Ոչ վայելէ առն թագաւորի այդպիսեաւ շրջել աւազակելոյ խմբով, փախստեամբ և տալ հրոյ ճարակ առնելով զշէնս: Այլ պատիւ թագաւորի պահանջէ ըստ օրինաց թագաւորի քաջութեամբ և վստահութեամբ դէմ յանդիման յայտնապէս ճակատ յօրինել, և յետ յաղթութեանն ապա թագաւորապէս յաղթանակ կանգնել, և ոչ որպէս աւազակ երթալ գնաս հասուցանել, գողանալ և փախչել: Արդ պատրաստեա զքեզ և եկ պատահեսցուք միմեանց յայտնի պատերազմաւ, զի զատեսցին այլք զյաղթողն և զյաղթեալն: Զայս լուեալ թագաւորին հրաման ետ ի վաղիւ անդր յօրինել ճակատ մարտի ի դաշտին[1] յաբեւելից կողմանէ սուղ լինչ հեռագոյն ի քաղաքէն: Եւ ի վաղիւ անդր վաղ քաջ ընդ առաւօտն, երկոքին կողմանքն արձակեցին նետային դէմ ընդդէմ ի փոքու ասպարիզի: Ձակատեալ կային ի կարգի իւրեանց եւ հայէին ընդ միմեանս յառաւօտէ մինչեւ ի ժամ վեցերորդ, և ոչ ոք շարժէր ի տեղւոջէն իւրմէ: Իսկ թագաւորն կայր զկնի կարգաց զօրացն, և սպասէին միմեանց թէ ո՛ նախ սկսանիցի զպատերազմ: Եւ որք պատմէին մեզ զայս ամենայն, թարգմանք Հոռոմոց և Պարսից, երդմամբ հաստատէին: Ուր ուրեմն, ասեն, արք երեք ի մէնջ ի գնդէ Հոռոմոց՝ մտարկեալ զեբրիվարս մեր սրընթաց արշաւանօք շրջեցաք ընդ մէջ երկոցուն բանակացն, եւ գնացեալ մերձ ի կարգս զօրացն Պարսից և նովին երագութեամբ դարձաք անդրէնն: Զայս երիցս արարեալ, այլ ոչ լինելով միջամուխս, այսր անդր երթայաք և գայաք. և երկոքին կողմանքն յակճիռս կացեալ հայէին ի մեզ, թէ ո՞րպէս յառաջ մատչէաք զրգռեալ զնոսա ի մարտ: Եւ տակաւին ոչ ոք շարժէր ի տեղւոջէ իւրմէ և ելանէր ընդդէմ մեր, այլ որպէս պատուար ամուր կային կանգուն յիւրաքանչիւր կայս և խօսել անգամ ընդ միմեանս ոչ էր ներեալ: Անագան ուրեմն ապա հրաման տայր ազդ առնել, եթէ չիցէ այսօր հնար մարտ մղել, զի անց ժամանակ պատերազմի: Եւ դառնայր իւրաքանչիւր ոք ի բանակ իւր: Բայց ի գիշերին յայնմիկ, չեւ մերկացեալ առաւօտուն՝ գտաւ թագաւորն հանդերձ զօրօք իւրովք յեզր գետոյն Եփրատայ, գուն գործել ամենայն ջանիւ անցանել ընդ այն, եւ էր տեղին հեռի ի Մելիտինոյ իբրեւ վեց մղոնաւ: Ընթանային Հոռոմք զկնի նոցա արգելուլ զնոսա առ եզերբ գետոյն և կռտորել, զոր և արարին իսկ: Արգելան Պարսիկք, և իբրեւ ետես զօրն նոցա եթէ ահա մերձ են Հոռոմք ի թիկանց կռւսէ, հեծեալ ի ձիս՝ թօթափէր ի գետ անդր, և սուզեալ կորնչէր կիսով չափ և աւելի: Իսկ ինքն թագաւորն և այլք ընդ նմա, ոմն ի ձի և ոմն ի լիւզ մազապուր ճողոպրէին անցեալ յայնկոյս և չուէին փութանակի ի հայս ի բաժին Հոռոմոց: Եւ զամենայն տեղի՝ ուր և կռխէին երազընթաց ոտք նորա՝ հրամայեալ, և զարձեալ գնայր ընդ բարձրատար լերինս Քարքէոյ[2], ընդ որս ոչ էր երբեք գործեալ ճանապարհ, եւ սպիպեալ էր զզօրս իւր յառաջոյ երթալ և յարդարել ճանապարհ ինքեան. և յառաջել նոցա կռտորէին զանտառս, և երբեմն հարկ լինէր և զլերինս հատանել և հարթել, զի բացցին անցք թագաւորին:

---

1. Campus.
2. (Karcha). Ծանօթարարն յիշէ, ի հարաւակողմն Բաղդադայ ոչ կարի հեռի ի Սելեւկիոյ:

digitised by A.R.A.R.@

եւ այսպէս կոր ի գլուխ և սրաբեկ հա-
զիւ ճողոպրէր զանձն ի ձեռաց Հոռոմոց,
և բազում տառապանօք անկանէր յաշ-
խարհ իւր: Վասն որոյ հրաման հանէր և
օրէնս հաստատէր, զի մի եւս ելցէ թա-
գաւոր անձամբ ի պատերազմ, բայց եթէ
ընդդէմ այլոյ թագաւորի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ժ.

*Որ ինչ յետ այսորիկ պատահեաց Հո-
ռոմոց ի Պարսկահայս:*

Ցետ կատարելոյ զօրացն Հոռոմոց՝ ըզ-
պանծալի յաղթութիւնս զայս, և զբազումս
յեկելոցն ի վերայ իւրեանց սատակելոյ,
և զհիւսիսային ազինս որ ընդ Պարսից
իշխանութեամբ էին՝ հարկանելոյ և նը-
ւաճելոյ, մինչամուխ եղեալ էին յաշխարհն
Պարսից հարուստ փարաւխս, և աւերելով
հասին մերձեցան իբրեւ երիւք հրասախօք
ի մայրաքաղաք անդր Պարսից. գերեցին
և զփիղս Պարսից, որովք լցաւ կոստան-
դինուպոլիս, և կատարեցին գործս արու-
թեան յոլովս որ անցանեն զչափ պատ-
մութեանս, և բովանդակ երկիրն Պարսից
սարսեր յերեսաց նոցա: Եւ եղեւ զարձ
թագաւորին Պարսից, յամին 880 Աղեք-
սանդրի՝ յաշխարհ իւր: Ցայնմ հետէ կա-
յին Հոռոմք հպարտացեալք ի փառս ի-
րեանց յանհոգս, որպէս թէ չէր նոցա ընդ
թագաւորի ուրուք կռուել և աշխատել:
Այնուհետեւ կէին աներկիւղ ըստ կամս
անձանց իւրեանց. համարէին եթէ ազա-
տացեալ ի սպառ՝ օրէն իցէ հանգչել յա-
մենայն աշխատանաց մարտից պատերազ-
մի: Եւ սկան ամենայն զօրքն մեծաւ
վստահութեամբ տալ զանձինս յանհոգու-
թիւն կենաց՝ ընկեցեալ ի բաց զզէնս ի-
րեանց և զերիվարս արձակեալ ի ճարակ
արօտից: Եւ ահա յանկարծ հասանէին
լրտեսք ասելով. Աւրէք վառեցարուք ի
զէն, զի զօրք Պարսից գան ի վերայ մեր
ունելով առաջնորդ զՄարզպանն Տամ
խոսրով, զգուշացարուք անձանց ձերոց:
Ի լսել նոցա զայս՝ ծաղր առնէին և ար-
համարհելով ասէին. Ջիա՞րդ մարթ է նոցա
իշխել երեւել անգամ առաջի մեր: Եւ ոչ
հաւատային եւ ոչ կամէին պատրաստել
զանձինս: Եւ մինչ տակաւին խօսէին նո-
քա՝ ահա եկին հասին զօրքն Պարսից. և
չեւ եւս էին պատրաստեալք յընդդիմա-
մարտ պատերազմի, ճակատել եւեթ կա-
մեցան ընդդէմ նոցա. այլ իբրեւ տեսին
զբազմութիւն զօրաց նոցին, որք որպէս
զպարիսպ մի պնդեալ յառաջ խաղային,
անդէն երկիւղ կալաւ զամենեսեան, եւ
յահէն ազմկեալք շփոթէին, զի և ոչ իակ
ի մի վայր ժողովեալ ամփոփեալ էին
գունդքն, այլ ցրուեալք յուտել և յըմպել
և ի թուլամորթ ցոփութեան զեղխեալք,
վասն որոյ և ի տեսանելն զքշնամին՝
ամենեքին ի փախուստ դարձան. տեսեալ
և այլոց զփախչել նոցին՝ զահի հարեալ
փախչէին եւ ինքեանք. եւ սպարապետք
եւս զօրացն, իբրեւ տեսին զանձինս լը-
քեալ ի զօրաց փախստեամբ, փախչէին
և ինքեանք հանգոյն նոցին: Եւ որ կա-
րաց առնուլ զէն զանձամբ և գտանել զիւր
երիվար՝ հեծեալ փախչէր. եւ որ հեծի
զինեալ փախչէր, և զէնք խոչընդոտն լի-
նէին ի փախչելն, ընկենոյր ի վերայ ճա-
նապարհին զզէնս իւր և գնայր անզէն. և
որ զինուք աշտանակեալ էր ի ձի, և զէնք
խափան լինէին փախստեան իւրոյ, ըն-
կենոյր զնոսին ի բաց. և եթէ պարտա-
սէր երիվարն ի գնացս, թողեալ անդէն
զերիվարն ինքն հետեւակ փախչէր: Իսկ
զօրք Պարսից առանց փութալոյ և հալա-
ծելոյ գնային զկնի նոցա, բայց թշնա-
մանս եղեալ ծաղր առնէին և անարգէին,
զի 110,000 գոլով նոցա՝ ոչ իշխեցին
կալ ի զիմի 30,000 ից, և այնպէս եր-
կուցեալ փախչէին, որք երբեմն առաջի
թագաւորին կային աներկիւղ և անփա-
խուստ: Այսպէս հուսկ յետոյ աղարտէր
համբաւ զօրուն Հոռոմոց հանդերձ զօրա-
վարօք իւրեանց, զի Պարսք և ոչ զզէնս
իւրեանց ձգէին ի վերայ նոցա, ոչ աղեղն
մի լարեցաւ և ոչ տէգ մի նիզակի ընկե-
ցաւ ի վերայ նոցա: Ապա ժողովէին Պար-
սիկք զզէն, և զկապուտ նոցին, զզրահ,
զվահան, զսաղաւարտ, զտէգ, զսուսեր,

զնիզակ, զաղեղն, զկապարճ և զանթիւ
նետս: Ցետ այնորիկ ամենայն ոք ասէր
և պատմէր, թէ այս ամենայն յայն սակս
եկն ի վերայ Հոռոմոց, զի բարկացուցին
զԱստուած: Քանզի յորժամ գնային նո-
քա ի կռմանան հիւսիսոյ, որ քրիստո-
նեայքն էին, քահանայիւք, աւետարանաւ
և խաչիւ ընդ առաջ գային նոցա, և նոքա
չառնուին ակն և ոչ պատուէին զնա: Եւս
զի Հոռոմք լի անօրէնութեամբ, և լցեալ
ամբարտաւանութեամբ, կալեալ զմանկունս
տարեւորս և երկեմենիս զորս և գտանէին՝
զոտիցն ձգելով ընկենուին ամենայն զօ-
րութեամբ ուժոյ ի վեր ընդ օդս. և այլք՝
յանկանել մանկանն ի վայր՝ հարեալ նի-
զակաւ մղէին ի վեր, և ընդ թափ ան-
ցուցեալ մեռուցանէին և տային կերակուր
շանց: Եւ զկիսոնաւորս եւս նախատակոծ
առնելով սպանեալ եւ կողոպտեալ էին,
զմիանձնուն իսկ ի բազմամեայ միայնա-
նոցացն քարշեալ արտաքս, զծեր և ըզ-
պատուական մարդիկ կախեալ տանջէին
և հատեալ սրով զերանան՝ ասէին. բերէք
այսր զարծաթ և զոսկի: Եւ զկուսանս եւս
այնչափ լւկէին, մինչեւ վճարել նոցա ի
կենաց զառն մահուամբ: Այսպիսի անօ-
րէնութեամբ, որպէս պատմի, զոր արա-
րին, բարկացուցին զԱստուած, և Աստուած
եւս յամօթ առնէր զնոսա, խորտակելով
առաջի թշնամեաց իւրեանց, մինչեւ ոչ
իշխել կալ յանդիման նոցա:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱ.

*Ցաղագս Պարսկահայոց որք մտին ընդ
իշխանութեամբ Հոռոմոց:*

Զպատճառն յոյր սակս Հայք, որ յիշ-
խանութենէ Պարսից՝ եկեալ մտին ընդ իշ-
խանութեամբ Հոռոմոց, զժամանակն, ըզ-
յոլովութիւն պատերազմացն և զաւեր երկրի
նոցա, եւ թէ որպէս զիմեալ եկին ի մայ-
րաքաղաքն, և ընկալեալք եղեն ի կայսե-
րէն, կամ թէ որպէս գտին պարգեւ ի նմանէ
և բարձս պատուոյ, և ճոխացան բազում
ընծայիւք, և զայլ բազում ինչ ասացաք
ի վեր անդր և պատմեցաք յառաջագոյն
սակաւուք: Բայց այժմ ծնայ և մեզ ասել
զայն, զի կայսրս մեր զայս ամենայն պա-
տերազմունս մղէր ընդդէմ Պարսից վասն
նոցա, որք եկինն առ նա եւ խնդրեցին
օգնութիւն վասն քրիստոնէութեան զի մի
կորիցեն: Եւ իբրեւ կայսրն, որպէս ի ճահ
է ասել, զամենայն Հայ մարդ ճոխացոյց
ընծայիւք և շքեղ պարգեւօք և միանգա-
մայն և զհարկ երից ամաց եթող նոցա.
թագաւորն պարսից առաքեալ ասէր ցնա.
Դարձո՛ առ իս զծառայս իմ, որք ապըս-
տամբեցին յինէն: Եւ կայսրն ոչ լուաւ
նմա: Ցայնժամ Պարսիկն ա՛ռ ի ձեռն
զխորամանկութիւն, և գրեաց առ Հայս.
ասէ. Ոչ հասուցից ձեզ չարիս և զան-
մտութեան գործդ ես ոչ յիշեցից: Ապա
ելանէին Հայք զարձեալ ի ծառայութենէ
Հոռոմոց և բովանդակ երկիրն երթեալ
հպատակէր Պարսից, բայց ի գլխաւորացն
որ ի կոստանդինուպոլիս առ կայսերն էին,
այսինքն գաւառն համարէն, իբրեւ 20,000
արանց, երթեալ մտանէին ընդ իշխանու-
թեամբ Պարսից: Եւ եկեալ Պարսիկն զար-
ձեալ տիրէր ի վերայ Հայաստան աշխարհի
որպէս յառաջն: Բայց մեծամեծք նոցին,
որոց գլխաւորն որ կոչէր Վարդան, եւ
ամենայն ընկերք նորա հանդերձ թագա-
ւորաւ ազգին, որ անուանեալ կոչէր Գուր-
գէն հանդերձ բովանդակ ազգաւ իւրով,
որոց նոյնպէս ընդ իշխանութեամբ Հոռո-
մոց լինել կամեցան՝ բնակէին ի մայրա-
քաղաքին պատուով մեծաւ, որք ամենե-
քեան եկեալ անձնատուր եղեն ի Թուսաբ-
նոս, յամին հինգերորդի թագաւորութեան
նորին, որ է 882 ամաց Աղեքսանդրի.
վասն այնորիկ և պատերազմի տեւեաց
դեռ ամս ինչ վասն սոցին:

(Շարունակելի)

digitised by A.R.A.R.@